զի պսակն օրհնութեան անարգեայ. Գ (3) ամս յապաշխարութեան կացցէ։ Ապա եթէ երիցու ուրուք դպտ պսակ եդեալ իցէ առանց հօր ու մօր աղջկանն, երէցն զքահանայութիւն չիշխէ պաշտել, և ՃՃ (100) դրամ տուգանս կալցին և կարօտելոց տացեն. և պսակն զոր եդ՝ անվաւեր լիցի։ Ապա եթէ յետ այսր խռովութեան և տուգանաց դարձեալ 'ի հաւանութիւն գան կամօք աղջկանն և ծնողացն, և յառաջ պոռնկեալ են, պսակ մի՛ օրհնեսցի, այլ իբրև զերկակին ուռ տեառնազրեալ դիցի 'ի պլուխ. ապա եթէ կուսան կացեալ են, ըստ օրինին պսակ օրհնեսցի։ Եթէ ապատ և թէ շինական-կանոն այդ կացցէ»[1]։

Այսպիսի կանոններ յօրինուում են նաև յետագայ ժողովներում և մենք նկատում ենք, որ XII-*րդ դարում հս առևանգումը բաւականին խորն էր արմատացել ժողովրդի կեանքում, քանի որ մի կողմից՝ Մխիթար Գօշն է Հայաստանի մի ծայրում և միւս կողմից՝ Ներսէս Շնորհալին միւս ծայրում՝ Կիլիկիայում, գրեթէ միաժամանակ, սակայն իրարից անկախ յիշատակում են դրա մասին։*

Մխիթար Գօշն իւր Դատաստանագրքի մէջ մտցնում է 3 կանոն առևանգման դէմ։ Սոցանից մէկը՝ ԼԴ յօդուածը (մասն Ա.), որի մի մասը վերցրած է «Հարցն հեռևողաց» ԺԵ կանոնից, 'ի միջի այլոց ասում է. «Զառևանկն, թէև որդիս ծնցի և հայր և մայր և աղջիկն չկամիցին մի՛ ինչ վնաս կրեսցէ 'ի չարագազան հոգւոյն, անդրէն դարձուցանել»[2]։ *Երկրորդը՝ ԺԱ յօդուածը, որ նիւթ է առել նշանուած աղջկայ առևանգման դէպքը, իրեն հիմք է ունեցել Անկիւրիայի ժողովի ԺԲ կանոնը։ Այդ ԺԱ յօդուածով հրամայւում է առևանգուած նշանուած աղջիկը յետ վերցնել, մինչև անգամ եթէ բռնութեամբ ապաստանուած լինի. «Որք միանգամ խօսեալ աղջկունք են և զուգեալ*

[1]) *Աբել եպս. Մխիթարեան «Պատմ. ժողով. հայաստանեայց եկեղ.» եր. 63.*

[2]) *Մխ. Գօշի՝ Դատաստանագիրք հայոց, հրատ. Վահան վ. Բասամեանի. եր. 129.*

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան